# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3

**ՀՀ ԷԷԲՊՆ ՋՏՊԿ «Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար ՀՀԷԷԲՊՆՋՏՊԿ-Ջ-ԳՀԾՁԲ-18/3 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգով Ազատի ջրամբարի հատակային ջրթողի խողովակաշարերի շինարարական աշխատանքների որակի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման նիստի**

ք. Երևան | 13 հուլիսի 2018 թ.
ժամը՝ 11:00

***Մասնակցում էին.***

Հանձնաժողովի նախագահ՝ **Գ. Մկրտչյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱՊ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ, գնահատման հանձնաժողովի ղեկավար)

Անդամներ՝ **Ա. Ջալադյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)

**Ս. Մելքոնյան** (համակարգում՝ ԳՊ/ԳԱ Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ)

**Ն. Համբարձումյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)

**Բ. Եդիգարյան** (համակարգում՝ ԳՊ/ԲԱ Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ)

Հանձնաժողովի քարտուղար **Ն. Նիկոլայան** (համակարգում՝ ԳՊ/ՄՀՄ՝ Գնման Պատասխանատու /Մրցույթի համակարգող )

## 1. Որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման մասին

-----------------------------------------------------------------------------------------------------------

(Գ. Մկրտչյան)

Ընդունել ի գիտություն՝

• Հրավերով չէր պահանջվում 1-ին տեղ զբաղեցրած մասնակցից՝ «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻՁ» ՍՊ ընկերությունից ներկայացնելու որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթեր:

• Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացվել առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

• Հրավերով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից հարցման վերաբերյալ եզրակացությունը չի ստացվել հրավերով սահմանված ժամկետում:

***1. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝***

1.1 Մասնակցի որակավորումը «Մասնագիտական փորձառություն», «Մասնակցության իրավունք» չափանիշների մասով գնահատել բավարար:

1.2. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ N526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 44-րդ կետը, ինչպես նաև ՀՀԷԷԲՊՆՋՏՊԿ-Ջ-ԳՀԾՁԲ-18/3 ծածկագրով հրավերի 7.14 կետը, մասնակցի որակավորում «Ֆինանսական միջոցներ» չափանիշի մասով գնահատել բավարար:

1.3 Մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված չէ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակցի որակավորումը «Մասնակցության իրավունք» չափանիշի մասով գնահատել բավարար:

Գնահատման արդյունքներն ամփոփված են գնահատման թերթիկներում:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

*2. Գնահատող հանձնաժողովը որոշեց՝*

2.1 «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻՔ» ՍՊ ընկերության հայտը գնահատել բավարար:

2.2 1-ին չափաբաժնի մասով ընտրված մասնակից ճանաչել՝ «ՆՅՈՒ ԻՆԴԱՍԹՐԻՔ» ՍՊԸ-ին:

2.3 Ընտրված մասնակցին ներկայացնել պայմանագիր կնքելու առաջարկ:

Ընդունվել է որոշում՝ կողմ-5 դեմ-0

**2.Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրվա, ժամի և վայրի մասին**

---

(Գ. Մկրտչյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստ հրավիրել պայմանագիրը կնքվելու կամ չկնքվելու այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ժամը 11:30-ին, ք. Երևան, Վարդանանց փակուղի 8ա 6-րդ հարկ, հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝ Գ. Մկրտչյան

Անդամներ՝ Ա. Ջալադյան

Ս. Մելքոնյան

Ն. Համբարձումյան

Բ. Եղիգարյան

Հանձնաժողովի քարտուղար Ն. Նիկոլայան